ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/20114-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-966-10.05.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի պաշտոնակատարի 2021 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 623 - Ա որոշումը:

/ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան
Հեռ. 515685

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-966-10.05.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Նախագծով, ի թիվս այլնի, առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309[1]-րդ հոդվածի 1-ին մասում որպես մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու հիմք նախատեսել նոր հանգամանքների ի հայտ գալը: Որպես կատարվող լրացման հիմնավորում՝ հեղինակների կողմից նշվել է այն, որ պրակտիկայում դատարանները սխալ են մեկնաբանում օրենքի նշված պահանջը, դրան տալիս են նեղ մեկնաբանություն, որպես այդպիսի հանգամանք հաշվի չեն առնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.[4]-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված նոր հանգամանքները:

Այս առումով հարկ է նշել, որ նախ՝ նախագծի հիմնավորումներից բավարար չափով պարզ չէ, թե նման կարգավորմամբ ինչպիսի խնդիր է լուծվում: Մասնավորապես՝ ներկայացված չէ, թե ինչ է ենթադրում գոյություն ունեցող՝ «այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում» արտահայտության նեղ մեկնաբանումը դատական պրակտիկայում: Բացի այդ, պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ են դատարանները նեղ մեկնաբանել քննարկող եզրույթը: Իսկ դա հնարավորություն չի տալիս գնահատման ենթարկելու առկա խնդրի ծագման համար հիմք հանդիսացած պայմանները, և, ըստ այդմ, նախագծով առաջարկվող կարգավորման էությունը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426[4]-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված նոր հանգամանքները և նույն օրենսգրքի 309.1-ին հոդվածով սահմանված մեղադրանքի փոփոխման ինստիտուտը միմյանց հետ բովանդակային առումով չեն առնչակցվում: Մասնավորապես, նշված նոր հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ դրանց ի հայտ գալու դեպքում կասկածի տակ է դրվում վերջնական դատավարական որոշման օրինականությունը, իսկ դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխության քննարկվող դեպքը կապված է մինչդատական վարույթից հետո ի հայտ եկած ցանկացած հանգամանքի հետ, որն

օբյեկտիվորեն առաջ կբերի ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ խնդրո առարկայի առնչությամբ օրենսդրական փոփոխություն կատարելը բավարար չափով հիմնավորված չէ:

2. Անդրադառնալով նախագծի 2-րդ հոդվածին՝ անհրաժեշտ է նշել, որ նախատեսվող փոփոխությունը և դրա առջև դրված նպատակը չեն համապատասխանում միմյանց: Մասնավորապես՝ առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «բացարկների» բառը, և նշված փոփոխության համար որպես նպատակ սահմանված է միայն դատավորին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու դեպքում խորհրդակցական սենյակ գնալու պարտադիր պայմանը հանելը:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ «բացարկների» եզրույթը չի ներառում միայն դատավորին ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը, այլ վերաբերում է նաև վարույթին մասնակից և բացարկման ենթակա մյուս անձանց հայտնված բացարկներին, որպիսի պայմաններում ստացվում է, որ դատարանը կարող է առանց խորհրդակցական սենյակ հեռանալու լուծել վարույթին մասնակից ցանկացած անձին հայտնված բացարկի միջնորդությունը:

Բացի այդ, օրենսդրի կողմից պարտադիր խորհրդակցական սենյակում կայացվող որոշումների ցանկի նախատեսումն ինքնանպատակ չէ, դրա հիմքում դրված են ցանկում սահմանված որոշումների՝ քրեական գործով վարույթի վրա ունեցած դերն ու նշանակությունը, դրանց հիմնավորվածության առավել բարձր չափանիշը, ինչպես նաև դրանց բողոքարկման հնարավորությունը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է հետևյալ կարգավորումը. *«Միջնորդության կամ պահանջի մերժումը չի խոչընդոտում դրա կրկին ներկայացնելուն քրեական դատավարության հետագա փուլերում կամ քրեական վարույթն իրականացնող այլ մարմնին: Քրեական դատավարության նույն փուլում կամ քրեական վարույթն իրականացնող նույն մարմնին միջնորդության և պահանջի կրկին ներկայացում հնարավոր է, եթե դրանք հիմնավորելու համար բերվում են նոր փաստարկներ, կամ քրեական դատավարության ընթացքում հաստատվել է դրանց բավարարման անհրաժեշտությունը»*:

Վերոնշյալի սահմանմամբ օրենսդիրն արդեն իսկ նախատեսել է նույն փուլում նույն մարմնին միջնորդություն ներկայացնելու համար այլ փաստարկների ներկայացման պահանջ՝ դրանով իսկ բացառելով քրեական վարույթն անհարկի ձգձգելու չարամիտ դիտավորությամբ նույնական միջնորդության ներկայացման հնարավորությունը: Հետևաբար, նշված նորմի առկայությունն ինքնին դատարանի համար սահմանում է կրկնվող միջնորդությունները չքննարկելու հնարավորություն: Ասվածի մասին է անմիջականորեն վկայում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ ամրագրված հետևյալ իրավանորմը. *«Միջնորդությունը պետք է լինի պատճառաբանված և նույն հիմքով կարող է ներկայացվել մեկ անգամ»:*

Հետևաբար գտնում ենք, որ նախագծով առաջարկվող փոփոխությունը նպատակահարմար չէ:

3. Նախագծի 3-րդ հոդվածի կապակցությամբ հարկ է նշել, որ քննարկվող հոդվածով սահմանված՝ նախաքննության ժամանակ գործին կցված կամ դատական նիստում դատարանին ներկայացված՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող փաստաթղթերի՝ բոլոր դեպքերում հրապարակման պահանջն ինքնանպատակ չէ և բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատական վարույթի հրապարակայնության, գործի արդարացի քննության և մրցակցության սկզբունքներից: Օրենսգրքի ընդհանուր վերլուծությունից պարզ է դառնում, որ դատաքննության ընթացքում ապացույցների և այլ վերաբերելի՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող փաստաթղթերի հետազոտումը տեղի է ունենում հրապարակային դատաքննության ընթացքում, և դրանց բովանդակությունը ներկայացվում է՝ անկախ համապատասխան միջնորդություն ներկայացվելու հանգամանքից:

Առկա օրենսդրական պահանջի հիմքում ընկած է, ի թիվս այլնի, այն հանգամանքը, որ հրապարակայնության սկզբունքի տարր է հանդիսանում նաև գործի քննությունը հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացնելը՝ հանցագործությունների կանխման, իրավապահ համակարգի հանդեպ հասարակության վստահությունը բարձրացնելու և այլ նպատակներով: Նշվածի հետ անմիջականորեն կապված է գործում առկա և դրան կցվելիք ապացույցների կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող այլ փաստաթղթերի՝

հրապարակային իմպերատիվ հետազոտումը, հակառակ պարագայում կստեղծվի գործի մասնակի քննության պատրանք:

Բացի այդ, նախագծով առաջարկվող տարբերակում առկա կարգավորումը, համաձայն որի՝ դատարանը կարող է փաստաթղթերը հետազոտել միայն կողմերի միջնորդությամբ և զրկված է փաստաթղթերը սեփական նախաձեռնությամբ հրապարակելու հնարավորությունից, արդար դատաքննության սկզբունքի և գործով ապացույցների հետազոտման ապահովման տեսանկյունից անընդունելի է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ապացույցների կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող այլ փաստաթղթերի հրապարակումը համապատասխան միջնորդության ներկայացման հանգամանքի հետ կապակցելը վտանգում է վերը նշված հիմնարար սկզբունքների երաշխավորված պաշտպանությունը, ուստիև առաջարկում ենք ձեռնպահ մնալ օրենսդրական համապատասխան փոփոխություն կատարելուց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք օրենքի նախագծով քննարկվող հոդվածները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 623-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արմեն Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-966-10.05.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-966-10.05.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 1-ին մասը «ի հայտ են եկել» բառերից հետո լրացնել «նոր հանգամանքներ կամ» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «բացարկների,» բառը:

Հոդված 3. Օրենսգրքի 349-րդ հոդվածը «եթե» բառից հետո լրացնել «տվյալ փաստաթուղթը հրապարակելու համար դատավարության մասնակիցներից մեկը միջնորդում է եւ» բառերով, ինչպես նաեւ նույն հոդվածը «հանգամանքներ» բառից հետո լրացնել «Քրեական գործի նյութերում առկա եւ չհրապարակված փաստաթղթերը համարվում են դատաքննության ժամանակ հետազոտված:» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի համաձայն.

«Հոդված 309.1. Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները

1. Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, եւ եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ:

Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան:

3. Մեղադրողը կարող է մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաեւ՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է:

4. Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ժամանակ է տրամադրում նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբաստանյալին եւ նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից:

5. Եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերաորակելու որոշում չի կայացնում կամ վերաորակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մինչեւ 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը:

Մեղադրական եզրակացությունը վերահաստատելուց հետո դատարանը, մեղադրական եզրակացությանը համապատասխան, կայացնում է դատական ակտ:

6. Եթե արարքը վերաորակելու արդյունքում փոխվում է քրեական գործի ընդդատությունը, ապա այդ հարցը լուծվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը կարգավորում է, թե որն է «նոր հանգամանք» հասկացությունը, որի մեջ ներառված են.

«1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

2.1) Բարձրագույն դատական խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ տվյալ գործով արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ եւ կոպիտ խախտման համար.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերում:»:

Վերը նշված քրեական դատավարության հոդվածների համակարգային վերլուծությունից հետեւում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 1-ին մասում օգտագործած «այնպիսի հանգամանքներ» եզրույթը մեկնաբանելիս պետք է առաջնահերթություն տալ նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակին՝ ելնելով դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությունից, այսինքն՝ «հանգամանք» եզրույթն օգտագործելիս օրենսդիրը նկատի է ունեցել նաեւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված «նոր հանգամանք» հասկացությունը:

Սակայն դատական պրակտիկան ցույց է տալիս, որ դատարանները սխալ են մեկնաբանում վերը նշված օրենքի պահանջը, տալով դրան նեղ մեկնաբանություն, առանց հաշվի առնելու օրենսդրի նպատակը, ուստի եւ առաջարկում ենք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 1-ին մասը՝ «Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել» բառերից հետո լրացնել «նոր հանգամանքներ կամ» բառերով՝ բացառելու համար կիրառող մարմնի կողմից վերը նշված հոդվածի սխալ մեկնաբանումը:

Ինչ վերաբերվում է Նախագծի կիրառմանը, ապա այն չի հանդիսանում դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաեւ նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող, քանի որ այն սահմանում է բացառապես դատախազի լիազորությունները, առավել եւս, որ դրանք նախատեսված են եղել քրեական դատավարության օրենսգրքում, հետեւաբար այն կարող է կիրառվել եւ՛ օրենքի ընդունումից հետո սկսված վարույթներով, եւ՛ մինչեւ օրենքի ընդունումն սկսած վարույթներով:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով օրենքի հետադարձ ուժ տալու ինստիտուտին, հստակ արձանագրել է, որ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերյալ կիրառելի չէ վերը նշված արգելքը՝ tempus regit actum (օրենքի գործողության ժամկետը) կանոնից ելնելով:

Տես՝ Սկոպպոլա ընդդեմ Իտալիա գործը կետ 110, Բոստի ընդդեմ Իտալիա գործը կետ 55 (վկաների ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու վերաբերյալ), Մորաբո ընդդեմ Իտալիա գործը.

Նախագծով առաջարկում ենք, որ դատավորի՝ իրեն հայտնած բացարկի հարցը լուծելու համար խորհրդակցական սենյակ հեռանալը պարտադիր չլինի: Նման կարգավորումները պայմանավորված են դատավարության մասնակիցների կողմից անհիմն ինքնաբացարկի միջնորդություններ ներկայացնելով՝ նպատակ ունենալով ձգձգելու դատական նիստերը:

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 349-րդ հոդվածը լրացում կատարել, որի արդյունքում այն կունենա հետեւյալ խմբագրությունը.

«Նախաքննության ժամանակ գործին կցված կամ դատական նիստում դատարանին ներկայացված փաստաթղթերը հրապարակվում են, եթե տվյալ փաստաթուղթը հրապարակելու համար միջնորդում է դատավարության մասնակիցներից մեկը եւ դրանցում արտացոլված կամ հաստատված են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ:»:

Նախագիծը պայմանավորված է նրանով, որ դատական նիստի ժամանակ դատարանը ստիպված է լինում հրապարակել բազմաթիվ փաստաթղթեր, որոնց եւ՛ կողմերը եւ՛ դատարանը ծանոթ են, սակայն վերը նշված հոդվածի համաձայն դատարանները ստիպված բավական մեծ ժամանակ են անտեղի ծախսում՝ այդ փաստաթղթերը հրապարակելով:

2. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում, եթե մեղադրողը գտնի, որ դատարանում դատական քննության ընթացքում առկա է նոր հանգամանք, վերջինս առաջադրված մեղադրանքը խստացնելու կամ մեղմացնելու առումով իրավունք կունենա լրացնել կամ փոփոխել:

Դատական նիստերն չեն ձգձգվի՝ պայմանավորված անհիմն ինքնաբացարկի միջնորդություններ ներկայացնելով, ինչպես նաեւ գործի նյութերը հրապարակելով: